

ՊԱՇՏՈՆԻԿԱՆ ԲԱԺԻՆ.

ՔԵՎՈՒՅԾՔ Ի ԿՈՆԴՐԱԿԻՑ ՎԵՀԱՓԵՄ ՀԱՅՐԵՊԵՏԻ.

Կոնդակ յանուն Գեր. Տէր Մակար եպիսկոպոսի վասն ձեռնադրութեան չորից ընծայելոց թեմին Երևանայ. թ. 381:

— Յանուն Լեռն քահանայի հզգիր աւանի, որով շնորհեցաւ նմա լանջախաչ քահանայական. թ. 388:

— Յանուն Քահանայից Երեցփոխանաց և ժողովրդեան Բագու քաղաքի, որով յայտնի առաջումն 8. Դարեկին վարդապետի Յովսիկեան առ ի քարոզել և մսիլդարել զբնակիչս տեղւոյն, յընթացս զատկական աւուրց. թ. 391:

— Յանուն Սինօդի, որով արձակի 8. Սահակ վարդապետ Ամառունի ի պաշտամանէ փոխ. վանահայրութեան վանից Շողակաթի և պատուիրի Սինօդին կարգել զայլ ոք առժամանակեայ ի տեղի նորին. թ. 402:

— Յանուն Ամեն. Պատրիարքին կ. Պոլսոյ 8. Մազարքիա Արքեպիսկոպոսի զինզրոյ պսակի Յակոբայ Շահինեան Զմիւռնացւոյ. թ. 424:

— Յանուն Գեր. 8. Փոխ. թեմակ. Երևանայ Ներսէս Արքեպիսկոպոսի, վասն ծխոց հանգուցեալ Կոստանդին քահանայի Կոստանեան. թ. 465:

— Յանուն Մեսրոք քահանայի Գեօնչեան ս. Աստուածածին եկեղեցւոյ Ազէքսանդրապօլ քաղաքի, որով շնորհեցաւ նմա իրաւունք կրելոյ զկամիլաւկայ. թ. 478:

— Յանուն Կարապետ քահանայի 8. Յարութիւնեան յիշեալ եկեղեցւոյ, որով շնորհեցան նմա իրաւունք լանջախաչ կրելոյ. թ. 479:

— Յանուն Գալուստ քահանայի Ղփշախ գեղջ, որով շնորհեցան նմա իրաւունք լանջախաչ. թ. 480:

— Յանուն Ազէքսանդր քահանայի Եքանլար գեղջ, որով շնորհեցան նմա իրաւունք լանջախաչ կրելոյ. թ. 481: (Զորեքին սոքագարգեատրեցան ըստ վիայութեան Գեր. Փոխ. թեմակ. Երևանայ. 8. Ներսէս Արքեպիսկոպոսի).

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՅՐԱԳՐՈՒԹԻՒՆԵՐԻՑ.

13 մարտի. Ղեհափառ Հայրապետի սրբաւտառ կոնդակի համաձայն Սինօդը 8. Ղահրամ վարդ. Սլկունուն կարգեց ս. Գեղարգայ վանքի փանահայր:

— Սինօդը լսելով Ղրաստանի և հմերեթի թեմի Կոնսիստորիայի թ. թ. 1375, 1786, 2111 և 4600 յայտարարութիւնները՝ վճռեց. նախ՝ Ղաղախ գաւառի Դօշավանք գիւղի Աւետիս քահանայ Աւետիսեանին ուղարկել Սիւնի անապատը ապաշխարելու, որովհետեւ նա Սինօդի հրամանով դադարեցրած լինելով քահանայագործութիւնից, այնու ամենայնիւ գեռ շարունակում է իւր անկարգութիւնները, կատարելով հաս և չհաս պատճներ և իւրացնելով աթոռահաս արդիւնքը: Յայտնել Տփխիսի Կոնսիստորիային, որ փութով ի կատար ածէ այս վճռութ և յայնի ի գիւղութիւն Տփխիսի Նահանգապետին: Երկրորդ՝ այդ քահանայի կատարած միւս զեղծուների համար քննութիւն նշանակել և հետեւնքը յայնել Սինօդին: Երբորդ՝ նորա կատարած ամեն մը պատճի համար քահանայական արդիւնքներից կարել տասնական ուուրի իր Աթոռահաս:

18-ն Մարտի. Գեղլու զիւղացի Յուղիթ

Սիմեոնեան Պարոն—Վարդանեանը խնդրագրը բով զիմելով Մինօդին՝ յայտնում է, իւր ամուսին Խաչատուր Մարտիրոսիան Օզյեանի անյայտանալը և կրիին ամուսնանալու իրաւունք է խնդրում: Մինօդը վճռեց. Մենաթական լրագրում յայտարարել Խաչատուր Մարտիրոսիան Օզյեանի անյայտանալու մասին և, եթէ վեց ամսուայ ընթացքում շիմացուի նորա օրտեղ լինելը, այդ ժամանակ միայն իրաւունք տալ նորա կին Յուդիթ Պարոն—Վարդանեանին մտանել ի նոր ամուսնութիւն:

ԿՐՈՆԱԿԱՆ—ԲԱԺԻՆ

Մ'Ի ԿԱՌ ՀԱԿԱԾԸ ՀԱՅԻՆ:

Առաջարկ զի տացաւ: ակն ընդ ական եւ առամ ընդ առամ: Այ ևս առևի ձեզ՝ մի կալ հակառակ չարին: այ երե ոյ ածից պատսկ յաբ ծնու բա՝ դարձն հնա եւ գիմսան: եւ որ կամից ոյ դաշել եւ առնուզ զապիկ բու բոն ի ես եւ զամակն բա: եւ որ աւապարհակ վարից զիզ մզու մի: եր ընդ հնա եւ երկուս:

Մաք. Ե. 38—41

Աչն մէին ես ա. Աւետարանի այն խօսքերից որոնք ամէնից շատ բերնէ բերան են անցնում և ամէնից քիչ հասկացուում:—Միալ է հասկացուում նախ Հին Կտակարանի այն պատուէրը, որ Երկնաւոր Վարդապետը բացատրում է այստեղ և լրացնում: Ելլից զբքի մէջ է այդ պատուէրը (Ի. 24), ուր ոչ թէ մարդոց բարոյական պարտականութիւննելն են որոշուած: այլ օրէնք է տրուած՝ մի չափ է սահմանուած, որի համաձայն Խորայէլացիք դատաստանի պէտք է ենթարկեին և պատիժ ային յանցագործին: Օրէնստուն չի ասում հարկաւ զրկանք կրողին: Դու պարտաւոր ես քո աչքը հանողի աչքը հանել՝ ատամ հանողի ատամը: այլ թէ իրաւունք ունիս այզպիսի արդար հատուցում պահմանջելու՝ աչքի փոխարէն աչք: ատամի փոխարէն ատամ: և ոչ աւելի: Դորանով նա ոչ թէ բացարձակ ազատութիւն:

Է տալիս վրիժառութեան զգացման, որ չափ ու սահման չունի և թելագրումէ յաճախ մի ատամի փոխարէն ընկերի կեանքը խլել նորա ամբողջ տունը կործանել: այլ ընդհակառակին սահմանափակում է, կարելի է ասել բոլորովին խափանում է, այն փոխանակ անմիջապէս բաւականութիւն որոնելու վիրաւորուած կրքերի համար, նա պատուիրում է գատաստանի զիմել և այդտեղ օրէնքի համաձայն հատուցումն ընդունել: Այնուամենացնիւ մի բարոյական պարտականութիւն զնում է նա, բայց ոչ թէ զրկուողի, այլ զրկողի և հետեւալիս բոլոր մարդոց վերայ: մէկին զրկանք հասցնելիս մտածել իւրաքանչելով անզամ թէ, նա իրաւունք ունի արդար հատուցումն պահմանջելու, և Աստուած, իւր տուած օրէնքի միջոցաւ վաւերացնելով այդ իրաւունքը՝ պահմանջելու՝ յամենայն գէպս նորան դիմել և նորա միջոցաւ հատուցումն զննել կարող է:

Քրիստոս զրկեալին է ուղղում իւր խօսքը. նա մի նոր օրէնք չէ տալիս, որի համաձայն կատարուած յանցանքը գատել պէտք է, այլ բարոյական կեանջնի մի նոր սկզբունք, որին համարտասախան պէտք է լինի մեր վերաբերումը գէպի յանցագործը: Օրէնքն արտաքին ինչ է և բաւականութիւն է գտնում: երբ իւր պահմանջելոր արտաքին ծշգութեամբ, տառացի կերպով կատարուած են: բարոյական սկզբունքը ներքին է, մեր ներքին բարոյական աշխարհի մէջ է գործ զրուում: որպէս զի մեր վերաբերումը համաձայն լինի նորան, հարկաւոր է որ նախ նորա համաձայն ներքին զգացումն ունենանք: Այս պատճառաւ արդարութեան օրէնքն ամենեին իւր տեղից չշարժում: երբ Քրիստոս բարոյական պարտականութիւն է դնում մեր առաջ՝ չհակառակել չարին, չարը չարով՝ զրկանքը զրկանքով չհատուցնել, այլ բարութեամբ խափանել չարը: ի՞նչոչ զգացումն է, մեզ սահիպում հակառակել չարին կամ մեզ հասցրած զրկանքի փոխարէն հատուցումն պահմանջել, արդիով